ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

« »_____ 20 թ. N_____

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ԼԻԱՆԱ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 17.05.2016թ.
N 282-ի 6 հարցման

Հարգելի տիկին Դոյդոյան,

Տեղեկություն ստանալու հարցումների գրանցման և դասակարգման, ինչպես նաև դրանց վիճակագրության վարման աշխատանքներն իրականացնելիս ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը /այսուհետ՝ Նախարարություն/ առաջնորդվում է ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1204-Ն որոշմամբ /այսուհետ՝ Որոշում/: «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգում հարցումները գրանցվում են քաղաքացիների դիմումներից, բողոքներից և առաջարկություններից առանձին՝ որպես գրություն, Որոշման N 1 հավելվածով հաստատված տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման կարգի 7-րդ կետի պահանջներին համապատասխան: Տրամադրվում է նաև 12 նիշանոց հսկիչ համար՝ գրության պատասխանը նախապատրաստելու ընթացքին առցանց հետևելու համար: 2015 թվականի ընթացքում ստացված գրավոր հարցումների ամփոփ վիճակագրությունը հրապարակված է Նախարարության պաշտոնական կայքի «Դիմեք մեզ» բաժնում:

Ներկայումս միջոցներ են ձեռնարկվում սահմանված ժամկետում Որոշման 3-րդ կետում նշված պահանջների կատարման ուղղությամբ, որից հետո կմշակվի և կընդունվի նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՍԵՐԳՈ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

կատարող՝ տեղեկատվության և հասարակայնության
հետ կապերի բաժին
հեռ՝. 011 521524

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ. (374 11) 52 46 41, ֆաքս. (374 11) 52 46 10
էլ. փոստ agro@minagro.am